

# ԲԱԶՄԱՎԵՊ

\* ՀԱՆԴԻՍԱՐԱՆ \*

ԳՐԱԿԱՆ · — ԲԱՆԱԳՐԱԿԱՆ · — ԳԱՏՄԱԿԱՆ  
ԿՐԹՈՒՆԱՆ ԵԽ ԳԻՏՈՒՆԱՆ

1843—1896

ՀԱՏՈՐ ԵԴ ՀԱՏՈՐ

ՑՈՒՅՈՒԱՐ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

(Ցես Հա. ԵԳ. յ'Էջ 535)

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՔ Ի ՆՈՐ ՃՈՒՂԱ

ԱՐԱՆՑ ՎԱՐՈՒՑ առաջին տպա-  
գրութիւնն կ'ըլլայ ի Նոր Զուղա  
1640 թուին։ Այս ամենահին  
տպագրութեան օրինակք սահա-  
ւագիւաց են։ և մեր մատենա-  
դարանինք՝ որ նուէք է կունի-  
բիր ուսումնական և հայագէտ  
անգղիացւոյն, պակասաւոր է ի սկզբան, ու Յ  
թուահամարէն սկսելով՝ շրւնի ճակատ զրոցն։  
1663ին ի վենետիկ գրչագրուած Տաղա-  
րանի մը յիշասակարանին մէջ կը զանենք,  
թէ խաշատուր վարդապետ և արհիեպիսկո-  
պոս կեսարացի՝ Զուղայի Սպահանայ Ամե-  
նափրկիչ վանաց առաջնորդը, ուսումնասէք  
եռանդեամբն վառուած՝ միաբանեց հետը  
զրազում ի միաբանակցացն և անոնց հա-

ւասար ջանքովը և յիրաւի զարմանալի և օ-  
րինակելի յարատեւալթեալք՝ տպարան մը  
հաստատեց ի Զուղա, և յորում նախ առա-  
ջին հրատարակեցան Հարանց վարուց այս ա-  
ռաջին տպագրութիւնը։ իրենք էին զրոց կա-  
զապարը շինողը, իրենք ձուլիչք տասից, շա-  
րոդք և տպագրողք։ իրենք դարձեալ տպա-  
գրութեան թուղթը պատրաստողք, առանց  
մէկէ մը տեսած և արված ըլլալու արուես-  
տք։ միայն իրենց ճարտարաւթեան և յա-  
րատեւալթեան արգեամբք։ որով ոչ միայն  
արգահատելիք՝ իրենց արուեստական թերու-  
թեանց պատճառաւ, այլ մանաւանդ գովելիք՝  
և մինչեւ իսկ զարմանալիք։ Յիշասակարանն  
մէջ բերենք ամբողջ, որ լիակատար պատ-  
րութիւն մը կրնայ համարուիլ, հետաքննու-  
1

թեան արժանաւոր, տպարանիս հաստատութեան. « Փառք... որ եմ՝ կարողութիւն տառապեալ անձնացո, հասանել յաւարտ գրոց որ կոչի Հարանց Վարք. թիվն Ռ.Ղ. ի քաղաքն Շօշ, որ է Ապահան. յանապատի չոր ջուղայոյ ի Թափաւորութեան պարսից Շահսեփոյն, և ի հայրապետութեան սուրբ Էջմիածնայ Տէր Փիլիպոսի. Յիշեանութեան քաղաքին Ջուղայոյ իշխանացուք պարո՞ն իտոնայ Սարֆազին իմաստնոյ և բարեպաշտի. Ջեռամբ նուաստ խաչատուք վարդապետի կեսարացոյ, որ բաղում աշխատութեամբ հանդերձ միաբան ուժտիւ հազիւ կարացար այսշափս ի յայտ բերել. Զի՞ ո՞չ ուսաք յամերէ. եւ ո՞չ տեսեալ ի վարպետէ. այլ ի տեսչութենէ Հոգոյն, և աղօթիք հոգեւոր հօրն մերոյ Տէր Մովսէս կաթողիկոսի փոխեցելոյ առ Տէր. որ կրիին լուսաւորիչ եղի հայկան սեռիս, նորոգելով զուրբը Էջմիածինն. և զեղծեալ կարգ մեր՝ որ ի թելափորթենէ յառաջնոցն, զոր Տէր Աստուած մեր ընդ երկուասան վարդապետաց զառակից և պատկերից արասցէ. ամէն:

« Յիշեալից եւ զնագեւոր որդեակցն իմ զՏէր Միմէոն վարդապետն, և զՏէր Գաւակիթ վարդապետն. որ յայսմ ամի շնորհին Աստուծոյ տուաք գաւազան երկողունցն. և զպատուական ծերունի տէր Մկրտիչն. նաև զաշակերտակից նոցին զտէր Բաղմասարն. զտէր Շահակն, զտէր Յովանէսն, զտէր Նիկողայոսն, զտէր Միքայէլն, զտէր Աւետիսն, զբովսկին, զմեծ Յովանէսն. և այլ եւս բազում մեծամեծք և փառունք. զոր ձանձրութիւն է յիշելն. և ամեններեան օժանզակին այսմ զործոյ: Ոմն ի թղթի շնորհինն. զի զթուղթն ևս ի տանէ եմք շինեալ: Բայց նիկդի լաւագայնն զդուարազիւտ լինելոյ սակս, այսպէս ձեռն ետ այժմուս. անմեղաղիք լեռուք, թերեւոյ յառաջնալոյ լաւ եւս լիցի: Ոմն ի կազմութիւն զործո: Զոր հատուցանողն բարեաց ըստ իբրաքանչիւր շանի և վաստակոց հատուացէ բարմապատիկ աստ և ի հանդերձելում: Եւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, ձեզ յիշողացը և մեզ յիշեցելոցս առնասարակ ողորմեսցի ի միւսանգամ գալըս-

թեան իւրոյ. որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն:

« Դարձեալ յիշեցէք ի մաքրափայլ և ի լուսաճանանց յաղօթս ձեր, որք օգտիք ի սմանէ կարդալով կամ օրինակելով՝ զփոքրագոյն աշխալուն իմ զտէր Յակոբն, զՄարգարէն, զՀայրապետն, զԱնտոնն և զՍարգիսն. որ բազում շանիւր եւ աշխատութեամբ եղեն ձեւընտու յայսմ տպագրութեանս: Եւ պակասութեան սորին անմեղաղիք լեռուք »....

Այս յիշատակարանէս զատ ուրիշ յիշատակ մը չկայ ոչ երկար և ոչ համառուս: Միայն նախընթացաբար յիշուած զբշագիք Տաղարանին մէջ զովալթեամբ կը յիշուին իրուս ձեռնարկողք և յառաջացոցիշէք այս մեծ գործոյս, բաց ի խաչատրոյ վանահայր արքեպիսկոպոսէ, նաև վերագոյն յիշուած և հանճարեղ փիլիսոփայ և իմաստուն քաջ Միմէօն վարդապետ Ջուղայեցի» և Բաղատասար և Ամանկ վարդապետն, որք ամեներեան Ջուղայեցիք էին: Եւ կը յաւելու. « Եւ ես մեղաւոր աշակերտեցայ սոցա, և առ ոսու որրոցս ուսայ զամենայն որ ինչ կարն մեր էր՝ որ ինչ և զիտեմք ողորմութեամբն Քրիստոսի և աղօթիւք սոցա ուսաք այսքանս որ ունիմք: Զի՞ ի յայն ժամանակն ի միում ամի տպեցար հինգհարիք Հարանց վարք ձեռամբ մերով ի տպագրատան խաչատուր վարդապետի» :

\* \*

Վլրան երկու տարի անցնելէն ետքը, ի 1642, ուրիշ գրքի տպագրութիւնն մ' ալ հրատարակուեցաւ նոյն ապարանէն. Այսնի Ժամագիրք մի: Երկու տարուան միջոցի մէջ բաւական փոփոխութիւնք, ըսենց նաև յառաջադիմութիւն, մուծուեր էին ի գործարանին. զի ուր յառաջին տպագրին զործածուած տառք փոքրիկը էին, անկերպարանց և աձեւ, ասոր մէջ աեսակ մի նոր տառից կ' աւելնայ, աւելի մեծ ձևով, թէպէտ և նոյնպէս անյաջող արուեստիւ. և մինչ Տօնացոյցն նախին ատուիք կը տպագրուի, ժամագիրքն աւելի մեծերով:

Ինչպէս առաջինն, և սա եւս ասկաւագիւտէ, և որոյ ճակատն պակասի ի միակ օրի-

նակին զօր ունիմք ի մեր մատենադարանի. ութածալ մեծաղիր հասորը մը , որպէս և նախայշտառակեալն : Մեր քոյ գոնուածն՝ քաղաքին ազգային Սուրբ Խաչ եկեղեցւոյն երիցուն պատկանած է մամանակաւ , և որ ի մեկնիլն՝ թողած է անդ յշշատակ , և անտի ի մեր մատենադարան փոխադրուած : Նոյն քահանային զրշագիր յիշտակարանն կայ . « Հրամանաւ երիցս երանեալ հայրապետին տիեւառն Փիլիպպոս սրբայշան ընդհանուրից՝ կաթողիկոսի . ես նուաստ և յեանեալ Սահակ երէցս Թօփամիցի , յրդեալ եղէ ի ոյն հայրապետէ ի կոստանդնուպօլուէ ի Վենետիկ քաղաք . սակա քահանայցութիւն առներոյ մերային ազանց վաճառականաց . ի թւյին Հայոց Իւձ և Բ. և Թագի աստ Գ ամ և Զ ամիս ի ծառայութիւն և ի սպասաւորութիւն այլ սուրբ Երեման Խաչ եկեղեցւոյ , որ է սեպհական վիճակ ազգին մերոյ Հայոց : Եւ ունէի ընդ իս զժամայցիրս զայս ստացեալ իմոց ընչից և արգեանց . զաւետու ի զուոն Երեման սուրբ Խաչ եկեղեցւոյ , որպէս զի սա լիցի յիշտակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց » : Առանկ աեղ աեղ ալ ուրիշ քանի մը համառու յիշտակագիր կը գրշագրէ Սահակ երէցս , աղաշելով յիշել և զնորանասակ որդեակն իւր զեղիազար : Ժամապրէն երօը նոյն տպագրին տառերով զրուած է և Դաւիթի մարգարէին Սազմոսարանն և յետոյ գոլասանութիւն սաղմոսաց սոսանաւոր , և ի վերջն յիշտակարան . « Փառք . . . որոց ամենառատ շնորհիւ յանկ եկեալ կատարեցաւ տպագրութիւն հոգէնուագ սազմոսացն Դաւիթի ընդ նմին և կարգաւորութիւն հասարակաց ազօթից եկեղեցեաց Հայսաստանեաց , յամի հազար և ինսներորդի և միակ թուոյ : Յամսեանն Հայոց տրէի երեք : Եւ Հոմօմայեցոց՝ Յանվարի իերկոսասան : Յաշխարհին պարսից Աբբայանիս քաղաքին ըստ զրոց Շոշ Կոշեցելոյ . որ այժմ Ասպահան արամայնի : ի գիւղաքաղաքին նոր Զուզայու : Ընդ հովական հազարական կուսակրօնից մասնիցս . որ է մենաստան կուսակրօնից բանափրաց : ի թագաւորութեան պարսից Շահսափոյն :

Եւ ի պիտապետութեան Հայոց հանուց

սեռից . Ցեառն Փիլիպպոսի երիցս երանեալ երջանիկ հայրապետի : Եւ ի վերատեսչութեան նահանգին ընդհանուր Պարսկաստանի հեղանողի արհիեպիսկոպոսի և շնորհապարտ վարդապետի Ցեառն խաչատրի , որ է բնիկ քաղաքաւ կեսարացի : Որոյ ջանիքն և աշխատութեամբն եղեւ տպագրութիւնս այս ի մէջ առնմիս հայկագեան : Քանզի այս ամէն-երջանիկ վարդապետութիւնս ի մէջ ազգացն լատինացւոց . ցանկայր միշտ որպէս զի լիցի ի մէջ Հայաստանեաց ևս . և յարածամ խընդիք հնար գլւտի արուեստիս այսորիկ : Եւ իբրեւ ոչ գտաւ ուստից առ ի նորու զիփափար ցանկութեան իւրոյ , ապահնեալ այնուհետև ի Հոգին սուրբ որ բաշխէ զջնորհն իւր առատապէս սորբ յուսան ի նա , սկսաւ աշխատել իւրով միարան ուխտիւն , մինչ զի ի կատար ենան գտպագրութիւնս և սփոեալ տարածեաց զիիրս ի մէջ հայաստանեացս : Որ եւ ժամանակիրս զայս ախտասէր կամօք ջանացեալ յաւարտ ենան ձեռամբ իւրօվ : Որ և մաղթեմ վայելողացդ և պատահողացդ զի խնդիբանջիր ի բրիստոսէ տալ նմա երկարակեաց խաղաղութեամբ առողջ կեանք : Եւ յետ սասի կենացս ընդ սրբոց աշխատացն վարդապետացն գասաորիլ ի փառա Աստուծոյ . ամէն : Այլ և ինդրեմ անմեղազիր լինել սակա անյարմարութեան . քանզի ամենեին ի վարպետաց ոչ է տեսեալ , այլ իւրով հանճարովն ըստ պարզելոյն սմա ի Հոգին սրբոյ այսքան յայտ ածեալ երկեցոյց վասն օպիի բազմաց : Ընդ սրբոյ երջանիկ հօրս յիշել մաղթեմ զմաքրասոն աշակերտեալ մանկուն իւր » (զորս արդէն նշանակեց Հարանց վարուց տպագրին յիշտակարանին մէջ) « Ընդ որս յիշել աղաշեմ և զայլ աշակերտեալ սրբամիտ սարկաւոգունս , ըզոէր Աւետիսն խոնեմ , զիաշատորն , զՄիմէօնն , զԳալուստն , զՄահակն որք միշտ աշխատին ի վերայ գործառնութեանս . ումանը սրբագրելով , և այլք կազմելով : Այլ և յիշել հայցեմք ի սուրբ աղօթն ձեր զմեծ Յովանէսն այր քաջագոսի , որ է վերակացու սուրբ ուխտիս , որպէս հայր հասարակաց ինաւմէ զամենեստան : Այլ և զծերունի խոնարար

զտէր Յուսիկն որ ձեր գոլավ սպասաւորաթիւն առնէ եղարցն ամենեցունց : Որոց Քրիստոս լիցի վարձահատոյց ըստ վաստակոց իրեւանց :

« Ընդ սոցին յիշել պաշտօիմ և զիս զտառապեալ հէքս ըզկրին մարդով խօթացեալ Սիմէօն կարօտ բանի : Որ ակար անձամբ սակաւ ինչ աշխատեցայ ի վերայ սրբագրութեան սորա հինգ կանօնիւ շափ և ի վերայ տօնացոցին զիսովին խակ» :

ի տօնացոցին՝ յառաջ քան զզատիկ . ա Յիշեսիր ի մաքրափայլ յաղօթս ձեր ով սուրբ ընթերցողը ըզբազուասար, և զուը յիշեալ լինք ի Քրիստոսէ . ամէն» : Խակ ի վերջ նոյն զրոց . « Գիտածից տօնասէրը . զի մեծ և երանելի հայրապետն Տէր Մ'ովսէս որ նորոգեաց զսուրբ իջմիածինն, որոյ ըստ արժանույն զովասանութիւն առաքինասէր վարուցն և աշխատաշն վաստակոցն որ ի վերայ կարգաց եկեղեցոյն և կրօնից հաստատութեան ունէր՝ այլում թողից տեղ . և կամ բաւական համարեալ մեր զոմանս յատաշագոյն սատցեալսն..... Աւարտ էաւ ճամագիրս բոլորովին ի թուին Հայոց ՌԴ և Ա. յապրիւ ամսոյ իԱ, շնորհոց Քրիստոսի Աստուծոյ մերոյ տեառն ամենակալի, որ է օրհնեալ յափտեանս . ամէն : Խնդրեմք ի ձէնջ որք պատահիցէք այսմ ապագրութեան յիշեալիք ի սուրբ յաղօթս ձեր զաշխատամիրուն այսմ սպագրութեան . զուէր Ցակորն . զՄ'արգարէն . զԲալտասարն . զԱրգիսն և զԱզարիայն : Ընդ սոսին և զնուաստ Սիմէօնս որ սակաւ ինչ աշխատեցայ ի վերայ սրբագրութեան սորա » :

Քիչ ետքը կրիկին առիթ պիտի ունենանց խօսիլ Յուհաննէս վարձապետին վրայ, զորմէ ակնարկութիւն ըրին յիշատակարանքս, յշրուակ ճանապարհորդութեան զիրուելով, տպագրութեան արուեստին կատարելագործութեան տեղեկանալու . որովհետեւ այս տպագիք, անհարթք և անարուեստ, չէին կըրնար զիրենք գոհ ընել : Խորհրդատեսորի մ' ալ յիշատակ եղաւ : Մ'նոց տեսած չենք . այլ միայն պատառիկ մը, երկու էջ բան, հասած է ձեռուընիս . յորում թէ մեծ և թէ փոքր տառք կան, և հաւանականարար կ'ենթաղբենք թէ ասոր հրատարակութիւնն ալ ե-

զած ըլլայ ի Զուղա, տառից ձևերավը և տըպագրին նմանօրինակ անհարթութեամբ : Բայց առ այժմ որոշ բան մը չենց կրնար ըսել, և բանասիրաց համար իրաւամբ վափարելի է որ ամբողջ օրինակ մը նոյն տպագրին յերեւան ելլէ . որով թերեւս լիազոյն տեղեկութիւն մը կարելի ըլլայ ստանալ ի յիշատակարանաց՝ եթէ կը գտնուին :

\* \*

Անցնինք հիմա խօսիլ Յուլիաննու Անկիւրացույ վրայ, որ ստուգապէս մեծ արդիւնք ունի հայկական սպագրական արուեստի յառաջադիմութեան և բարւոյման աեսակեալով :

Բանանք իր ձեռոքովը և ջանիք 1642 թուականին ի Վենետիկ սպագրուած Սաղմոսարան զրոց յիշատակարանն, տեսնելու համար թէ ով է Անկիւրացին : Հոն կ'աղերսէ յիշատակութեան արժանի ընել իր ծնողցն, զնայրն Մ'ուրատ սարկաւագ և զմայրն զփաշամէլիք, իր երկու որդիքը զՄ'իկայէլ և զԳարրիէլ . « Ես, կ'ըսէ, նուաստնոզի Յոհաննէս անկիւրացիս տեսնանէի զպակատութիւն զիքանց ազգին Հայոց և վարանէի ի մոի, եթէ զինչ լինի հնար բազմանալց հին և նոր կտակարանաց . ցանդի պատճառ նուազութեան այս էր, զի բազում ծախիք և զժուարան թեամբ հազիր կարէ ով ստանալ Ա գիրք կամ թ . և կամ երիս . թող թէ պիտոյանայ բազում » : Այս վախճանաւ զիմած է ի Հռոմ քաղաք, ուր շօրս տարի նեղութեամբ և աշխատանօք և բազում շարշարանօք, կ'ըսէ, զոր չէ հնար ի զիր արկանել, զոր ծածկաւ գէտ ստեղծաւլն իմ զիտէ : Եւ հանի զպողպատն և զկաղապարքն և զծաղկիքն և զծաղկարերն բազում աշխատաւթեամբ » :

1642ին ի Հռոմ տպագրուած զրքի մը մէջ, Հայ խորհրդասետի, առաջին տպագրութիւն, կը հանդիպինք իր անուան . Կրոպացոց կողմանէ, չենց զիտեր ինչ պատճառաւ, իրեն տրուած՝ ձնվաննի Մոլինոյ անուամբ : Ցարածման հաւատոյ ժողովյն կողմանէ քննութեան կը տրուի վերքս, որուն « կարգեալ սուրբ խորհուրդ պատարագի Հայոց », կամ Լատին լեզուով Ordō di-

vinæ missæ Armenorum misericordiæ h[ab]it[u]m  
dagiouf, վիցենցիուս Ռիքարտոս անուն աս-  
տուածաբանին, որ կը լիայէ ի սկիզբն գրոցն,  
թէ «Հայոց պատարագի խորհուրդս այս լա-  
տին լեզուով գրեալ՝ ինձ յանձնեցին սուրբ  
ժողովն Գարտինալաց, վասն օգտութեան  
Հայոց ազգի։ Եւ ես վիցենցիուս մակա-  
նուամբ Ռիքարտուս՝ նորին սուրբ ժողովոյն  
հրամանաւն առեալ տեսի և սրբագրեցի»։  
Լատին՝ որոյ թարգմանութիւն է հայկա-  
կան՝ ունի այսպէս. Liturgiam hanc Ar-  
menorum, potestati mihi facta a sa-  
cra Cardinalium Congregationis su-  
per negotiis Armenorum, recognovi;  
ut ex decreta ejusdem Sacræ Con-  
gregationis censura emendam. Romæ,  
die 6 Maij 1636 : Այս վկայականէն վեր-  
ջը դրուած կ'հետեւեալն։ «Ես Յոհաննէս  
Մուշինի թարգմանիչ Հայոց զդիրքս զայս  
հայի և լամինի լեզուով գրեալ տեսի և կար-  
գացի, և վկայեմ վասն ճշմարտութեան զի ա-  
մեննին հաւասարին միմեանց բարի և ստոյք»։

Այս վկայականէն է իրեն յանձնուած պաշ-  
տամնէն կ'երենայ թէ Անկիրացին բաւա-  
կան զիրք ունեցող և կարեւոր անձ մ'էր  
ի Հովիմ։ և յայլաւսա ալ զիտենց թէ իրեն  
յանձն եղած էր զարձեալ հայկական Աս-  
տուածաշունչ զրոց հրամարկութիւն մը՝  
յարեւլից կամ յարեւմուից բայց անկարելի  
եղած է այս գործին ճեռոց զարսելը, կամ  
ծանր ծախուց և կամ զիմացն եղած գուռա-  
րութեանց պատճառաւ, վասն զի ունինց իր  
ինքնազիր ուրիշ յիշատակարան մը յորում  
կ'ըսէ։ «Ես Յոհաննէս Անկիրացի, ֆրանկն  
Ճ'վանի Մաւլինո կոչէ. եկի ի մեծն Հովիմ  
թիվին Հայոց ՌԶԶ և կեցայ մինչեւ ՌՂ  
վասն պասմայ առնելոյ զսուրբ աստուածա-  
շունչն. բայց ոչ կարացի աւարտ առնել վասն  
բազում պատճառից ւ բայց ույս ունիմ ի  
վանատիկ կամ ի կոստանդինուպոլիս կատա-  
րել. զի ունիմ զամենայն գործիր որ պիտոյ  
են իման այց բանիդ»։

Այդ իր յոյսը մասամբ միայն կրցաւ կա-  
տարել. այս ինքն Սաղմոսաց ընտիր տապա-  
գրութեամբ մը ի վենետիկ, որոյ վրայ պիտի  
խօսինք։

Ուժածալ հասոր մ'է այն, և վեր-  
նազիր կամ նակատ ունի՝ «Սաղմոս ի Դա-  
փիթ կազմեցաւ ի մայրաքաղաքն Վանատիկ  
աւգնականութեամբ պատուական բժշկապե-  
աին Յովիսեփոս Առօմատարիոսին և Անգեղոս  
Պելյանոսու աթենացուոյն, թիվին Հայոց մեծաց  
ՌՂԱ»։

Ո՞վ են այս երկու օտարանուն և օտարա-  
քաղաքացի անձնից, որ Անկիրացուոյն օգ-  
նական և օգտակար եղան այս ձեռնարկու-  
թեան. —ի յիշատակարանէն մասամբ կը յայտ-  
նուի. մինչ ազգային շրլալնին անտարակոյս  
է. կարելի է, մանաւանդ երկրորդն, որ Յոյնք  
ալ ըլլային, որ իրեւ զազգակիցս մեր, և  
աւելի բազմաթիւ զաղթականութիւն ունէին  
և ունին ցարդ ի վենետիկ, և ուր ինչուան  
վերջի տարիներս կը տապագրուէին իրենց ե-  
կեղեցական գրեանք, և մարուր և անսխալ  
տապագրութեամբ կը տարածուէին յարեւլու և  
ի սկիզբն Անկիրացուոյն այս հրամարակու-  
թեան դրուած է Դավթի մարգարէի պատ-  
կեր մը՝ ընտիր պղնձի փորագրութեամբ, քա-  
զաքին իշխանազուիս տոմերու զգեստով և  
փոխական զիտարկով։ Նոյնակի ընտիր փո-  
րագրութեամբ բարելոնի հնոցին մէջ ձգուած  
երից մանկանց զէպցին նկարագիրը, ի հան-  
գիպոյ անոնց օրնութեան. և սրբոյ կուսին  
այցելութեանն առ Եղիսաբէթ, ի հանդիպոյ  
Մեծացուցիք օրհնաբանութեան. Մանասէի՝  
որոյ զիթաները քակել կու այս Նարուգոյո-  
նուոր. և նախ քան զհաւատով խոստովա-  
նեմ աղօթթ Շորհարայ՝ նոյն սուրբ հայրա-  
պետին պատկերը, միանձին ասարազու, փի-  
լոն արկեալ զանձամբ, վեղար ի զուկն որ  
փիլոնին հետ կարուած է. ցաւք անշուք ի  
ձեռին, ուրաքազեսու։ Թերեւս հրամար-  
կողի ժամանակ Միարանօզաց և կամ ճգնա-  
ւորաց ձեն էր զոր կը զգենուին, և որով կը  
ներկայացընէ զսուրբ կաթողիկոսն։

Ի վերջոյ միակ և զիխաւոր յիշատակարան  
մի, որոյ մէկ կարեւոր մասն արդէն յառաջ  
բերինք. և մասցածը հաս. Հռովմէն ելլե-  
լով, «Եկեալ հասա, կ'ըսէ, ի վենետիկի.  
միստ ի գործ անկանել։ — Զոր և նկարե-  
ցաւ տապագրական երգարանն Դաւթի ի թը-  
ականիս Հայոց ՌՂԱ»։ ի ժամանակս իշ-

իւանաց իշխանի պայծառաքոյն Փրանկէսկոս էրիցո դումին. մեծաւորաց հրամանաւ և բրիլի ճնով ձեռամբ իմոյ նուռաստ անկիւրացի թարգմանիչ Յոհաննէսին, որ ջուռաննի Մօլինո, ի լու և յընտիր աւրինակէ Գառնեցոյ և յայլ ընտիր վարդապետաց և վկայեած օրինակէ. քննութեամբ և վերակացու և հասու լեալ տպագրեցաւ զսուրբ գիրք ու ի պայծառութիւն մանկանց եկեղեցու ազգին Հայոց :

« Դարձեալ աղաքեմք զձեզ որ հանդիպիք սմա կարգարով կամ աւրինակելով, յիշեցէք ի մայրափայլ ազօթմ ձեր զնուռաստ անկիւրացի Յօհաննէս, որ պատճառ եղէ թէ գրին և թէ տպագրելոյն. և զպատռական այրն Եղուէփոս Ալոմաթօրին՝ որ սկզով և արծաթով օննեաց ինձ : Եւ զծնաւզն իմ; զփոխեալն ի Քրիստոս՝ զՄուրատ սարկաւագն, և զմայրն իմ զՓաշամելիքն, և զերկուա որդիսն իմ զՄիքայէլն և զԳաբրիէլն. և զայրն ամենայն արեան մերձօրս իմ . և զուք ընկալջիր զնոյն :

« Դարձեալ ծանիք զի ամենայն ինչ սորս ընտրութեամք ժողովեցի. եթէ ձև զերուսն, եթէ զար տոսկերուն, եթէ զթանաքն եթէ զզթուփին, թէ զկանանքն և եթէ ծաղկագրերն եթէ զպատկերն և եթէ զկապն. մանաւանդ զյաւրինակն. որ բազում քննութեամբ և բազում աշխատութեամբ ի յայս չափու հասուցի աղաթիք ձերովք. և զուք որպէս վայելէ ձեր սրբութեանդ այնպէս ընդունիք :

« Եւ այլ յիշեցէք զտղայահասակ մանուկն զՊովսեփիսն, որ աւզութիւն արար ինձ ի շարելն զրին . և է՝ երկուսասանամեամանուկ. զոր տէր Աստուած զինքն ամփառ պահէ ի վերա երկրի. ամէն :

« Դարձեալ աղաքեմք յիշել զԺարանկացի մահուսի Աստուածատուքն, որ բազում օնութիւն արար ինձ ի սրբագրելն և յառակարանելն. զոր տէր Աստուած տացէ զփոխարենն ասս և ի հանդերձեալն. ամէն: ի պատրատան Սալիկացառ: Վերջ »: — Տպարանին անոնն ալ յունական ձև մը ունի, որպէս և հողովումը :



Նոյն Անկիւրացին հետեւալ 1643 ապր-

այն ուրիշ հրատարակութիւն մ' այլ ըրած է ի նոյն քաղաքն վենետիկ. զնախկին տպագրութիւն Եթուուս որդի և այլ ուրիշ քանի մի չափական քերթուածոց Շնորհապոյն. աւելի ընտրելագոյն ապիւք, մանրապոյն երկատեսակ տառիւք և զանազան պատկերներով. յորոց ի միումն կը տեսնենք վարձեալ զնայրապետան հեղինակ ի ձև միանձին և բոկուսն, խնարծեալ ի ծունկս առաջի սրբութրոգութեան: Փոքրիկ ութածալ հասուր մի, յորում ամփոփին, ինչպէս ըսինք, բաց ի Յիսուս որդի զրոց, Մանր քերրուածք և վիպասանուրիւն նոյն սուրբ հօր :

Հետաքննութեան արժանաւոր է և յայսմ տպագրի զետեղուած միակ յիշատակարանն ի վերջ գրոցն, յորում կը յիշատակէ իր յարատեւակ փոյթն և ջանք ի յառաջապիմութիւն և ի բարգաւաճանս տպագրական արուեստիս. և յորում կը յիշուի Սրբափին Կաթուղիկոս Հայոց, Խրախուսի և յորդորոյ, նման իր նախորդին Միկայելի որ պատճառ եղաւ արգարեան տպագրութեանց: Ոյն այս Սրբափին հայրապետ, որոյ ուսումնակր փյութն և եռանդր, գոլութեամբ կը յիշատակէն իր ժամանակալիցը, մեծ փափաք ունէր տպագրութեան արուեստիս, կ' բաէ Անկիւրացին իր այս յիշատակարանին մէջ, « և ոչ եղեն հասու ». անջուշան ձանձամբ աշխատելով ու չյանզողելով ի նոյն. ուսափ պատուիրեց իր աշակերտին, Գրիգորի կեսարից բարունապետի. յոյս և վստահութիւն ունենալով թէ նա կարու ըլլայ ի զուխ հանել. և նա եւս ոչ կարօղացաւ: » Այն ատեն, կ' բաէ, ինձ յանձնեց զայդ զործ. և պատճառ այն յանձնարարութեան, որպէս ետև Անկիւրացին ծանօթութիւն ունէր Եկուպավածոց հետա, « եթէ կարգալով և եթէ լեզուաւ »: Զիուսափելով յաշխատանց և ի նեղութենէ, և զընուարութեանց աղն չլքանելով, Անկիւրացին ինչպէս աեսանք, հասաւ իր նպատակին. և թանձին կալեալ, կ' բաէ, ջանացի աղօթիք նոյս: Զոր և պարզեւատուն ամենեցուն քրիստոս պարգևեաց ի ձեսին իմոյ զայսչափն. առ ի պայծառութիւն սրբու եկեղեցւոյ ի տանս Հայոց. Զոր և հասի յաւարաըստ ձերում աղօթիք. իսկ եթէ նուազու-

թիւն գասանէք՝ ներհցէք իմում՝ պակասուռ թեանն. զի կար մեր այս էր: Արդ եղել կասարումն և աւարտումն երգոյս Տեառն՝ Ներսիսի Հայոց կաթուղիկոսին, զոր անուանեալ կոչի Յիսուսարդի. ի լաւ և ընտիր յարինսակէ ստուգաբանելով. ի թլականի հայոց հազար և զի՞: ի հայրապետութեան Հայոց Տեառն փիլիպոսի սրբազն կաթուղիկոսի. ի վայելուշ և ի գեղեցկաշէն կղզիս Վանասկոյ. Եւ յիշխանութեան նոյն քաղաքի Փռանկէսկոս Երիցու գուծի. և մեծամեծաց հրամանաւ և բրուիչէ ճողվ:

« Դարձեալ աղաքեմ զձեզ որ հանգիսկի սմայ կարգալով և կամ օրինակելով, Յիշեցէք ի Քրիստոս զնուասոյդի Յոհաննէս անկիրեցի. և զնուղն իմ զՄուրաս սարկաւազն և զփաշամելիքն. և զգեռարցոյ զաւակիքն իմ զՄիկայէլն և զԳարրիէն և զայլ ամենայն մերձաւորսն իմ... Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զբժշկապեսն զՅուլուկիս Արօմաթօրիսն»

և զԱնկեղոս Բէլիսէլոն որդ ձեռնտու եղեն ինձ ծախիւք և ընչիւք: Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զջարանտացի մահաւսի Աստուածատուրն որ օգնութիւն արար ինձ ի սրբագրեն. այլ և զօրինակն չնորհեաց ինձ. զոր տէր Աստուածն մեր տացէ զփոխարէնն աստ և ի հանգերձեալն. ամէն: կատարեցաւ զիրդ. Բ. Նախ Սաղմոն և ապա Յիսուս որդի: — ի տպագրատանն Սալիքաթառ:


Ընթերցողը կը տեսնէ որ ինչպէս նոյն է ապարանն՝ յրում զրշմեցաւ Սաղմոսարանն, նոյն են և երկու յիշատակեալ ընկերութիւք և օժանդակիք, յորոց միոյն թժշապետ մակղիբն կ'ընծայուի. նոյն և ի սրբագրութեան զրոցն իրեն ձեռնտու՝ Աստուածատուր Տարենացի, որ բանիմաց և բանասէր ոմն թուի:

Այսափ է մեր տեղեկութիւնը Յոհաննու Անկիւրացոյն և իր ապագրական զործունէուեան վրայ:

(Շարայարելի)



## ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՃԱՆՏՐԻ ՅԱՐԵՒԵԼՈ



(Տես Հո. ԵՊ յիշ. 498)

### ԼԵ.

Վայրէց իգդիրի կողմէն. — Եօրն խասնարան հրաբուղիք. — Իգդիրի ջրանցք և անոնց անպատեհութիւնները. — Բոյնք արագի. — Գարագալա կայարան:



ՈՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԵԲԱՐ՝ Երկրիս հանգային մեծամարտին զանգուածներէն մին՝ կը բարձրանայ թարեալզուի ստորատէն, երկու կամ երեք հազարամետր խոռ բաւթենէ: Կողը գիւղը՝ ամիկիթամաեր ձեռով շինուած է բրոյս ստորտը, թերթ թերթ խաւերու վրայ՝ յորս վարդէմարգ Զայ՝ փորած է իւր անկօղինը: Այս վտակը թաքեալզուէն բղնելով կ'ուոզէ զկողը: Հիւ-

մայ զիւղը կը ապահուի հակառակ ափին վրայ, լերան կործանման պատճառու:

Աղին շաեմարանը կ'երկայնի ընդ արևելս՝ աւելի քան զմի հազարամետր Զինշարազի կողմէն. ուր կան երեք կոյսեր զատեալք կարմիր և կապոյա կրախառն կաւէ անկողնովք:

Ստորին կայար թանձր է եօթը կամ ութ մետրի չափ. Երկրորդն գրեթէ նոյն է. և եր-